ՎԻԿՏՈՐՅԱ ԱՐՇԱԿՅԱՆ

ԶՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը քննարկում է ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման հարցում զննականության սկզբունքի կարևորությունը տարրական դասարաններում: Զննականության սկզբունքի մանրամասն բացատրությունը պատկանում է Ամոս Կոմենսկուն: «Ուսուցանողի համար թող ոսկե կանոն լինի այն, - գրում է նա,- որ այն ամենը, ինչը որ միայն կարելի է ներկայացնել զգայարաններով ընկալելու համար, այն է՝ տեսանելին՝ տեսողությամբ, լսելին՝ լսողությամբ, հոտը հոտառությամբ, համը՝ ճաշակելիքով, շոշափման ենթական՝ շոշափելիի միջոցով ընկալելու համար: Եթե որևէ առարկա միանգամից կարելի է ընկալել մի քանի զգայարաններով, թող դրանք միանգամից ընկալվեն մի քանի զգայարաններով» (**Տեր-Գրիգորյան Ա., 1980**): Վերլուծվում են զննականության հոգեբանական հիմքերը՝ հիմնված Ժան Պիաժեի հստակ օպերացիաների փուլի վրա, որը բնութագրվում է հստակ-պատկերային մտածողության գերակշռությամբ, ինչպես նաև՝ Լև Վիգոտսկու **սոցիալ-մշակութային տեսության** համաձայն. զննականությունը հսկայական դեր ունի երեխաների ճանաչողական զարգացման գործում՝ հատկապես **զարգացման մերձավոր գոտու (ԶՄԳ)** շրջանակներում: Հոդվածը կարևորում է ուսուցման գործընթացում **ինտերակտիվ և գործնական բաղադրիչների** դերը, որոնք զարգացնում են աշակերտների ճանաչողական գործունեությունը և մտավոր կարողությունները:

Այն նաև ընդգծում է զննականության դերը՝ որպես **Հանրակրթության պետական նոր չափորոշիչներով (ՀՊՉ)** սահմանված **կարողունակությունների** ձևավորման արդյունավետ միջոց: Հոդվածը եզրակացնում է, որ ճիշտ կազմված և մեթոդապես հիմնավորված զննական պարագաները ժամանակին և նպատակին օգտագործելու դեպքում ուսուցանվող նյութը կդառնա դյուրամարս, դասը կանցնի

հետաքրքիր, սովորողներին անմիջականորեն հաղորդակից կդարձնի մտածողության, մտքի առաջացման և ձևավորման պրոցեսին, իսկ ուսուցումն էլ կդառնա արդյունավետ: Ա.Բահաթրյանը դեմ է այն բանին, որ զննական ուսուցում ասելով՝ մենք հիմնականում ընդունում ենք տեսողական ընկալումը: Նա համոզված էր, որ այդ գործընթացին մասնակից պետք է լինեն երեխայի բոլոր զգայարանները. «Երեխան ոչ թե միայն պիտի տեսնի առարկան, այլև հնարավորության պայմաններում լսի, հոտոտի, շոշափի, ճաշակի և այլն: Բնականաբար, զննական նյութերից ամենալավը ինքն առարկան է, բնությունը, նրա ճանաչումը» (**Բահաթրյան Է., 1980**):

Հիմք ընդունելով վերը ասվածը՝ տարրական կրթության մեջ մտածողության առաջին դասերը պետք է անցնեն ոչ թե դասարանում և գրատախտակի առջև՝ այլ բնության գրկում, թանգարաններում, տեսարժան վայրերում. այս պարագայում ստացված տեղեկատվությունը լինում է առավել տպավորիչ, մնայուն և նպաստում է կապակցված խոսքի յուրացմանն ու զարգացմանը: Էքսկուրսիան, որպես գործնական աշխատանքի տեսակ, հիմնված է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչահեն գիտելիքների կայուն իմացության վրա և ենթադրում է պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն: ՈՒստի, տարրական դպրոցի ուսուցչի գլխավոր խնդիրներից մեկը պիտի լինի գեղեցիկի պահանջմունքի դաստիարակումը, որն իրականանում է էքսկուրսիաների, բնության դիտումների ժամանակ՝ զննականության միջոցով և նպաստում լեզվական տարրական գիտելիքների ուսուցմանն ու յուրացմանը: Որքան գիտելիքների ավելի մեծ շրջան հարկ լինի տիրապետելու, այնքան ավելի շատ պետք է հաշվի առնել, որ մարդը եղել և միշտ կմնա բնության մի մասնիկը, և այն, ինչը նրան հարազատ է դարձնում բնության հետ, պետք է օգտագործվի հոգևոր և մտավոր հարստությանը նրան հաղորդակից դարձնելու համար: Այստեղ՝ բնության մեջ է մանկան բանականության հավիտենական աղբյուրը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *զննականություն, տարրական դասարաններ, մանկավարժություն, ուսումնաճանաչողական էքսկուրսիաներ և բնության դիտումներ, ինտերակտիվ և գործնական բաղադրիչներ,*

կարողունակություն, սոցիալ-մշակութային տեսություն, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ(ՏՀՏ), դիդակտիկ խաղեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթական գործընթացում **զննականության սկզբունքը** հիմնարար նշանակություն ունի, հատկապես տարրական դպրոցի աշակերտների համար, ում ճանաչողական կարողությունները դեռևս զարգացման փուլում են: Այս սկզբունքը համահունչ է կրթության ոլորտում առկա ժամանակակից պահանջներին, որոնք ամրագրված են ՀՀ կառավարության կողմից հաստատված **Հանրակրթության պետական նոր չափորոշիչներում (ՀՊՉ)**՝ հատկապես շեշտադրելով **կարողունակությունների վրա հիմնված մոտեցումը** և շրջանավարտներին ներկայացվող **որակական պահանջները (ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, հոդված 1,** https://www.arlis.am/hy/acts/149788):

Սույն հոդվածում կքննարկվի զննականության էությունը, դրա կարևորությունը տարրական դասարաններում և զննականության տարբեր ձևերի կիրառման արդյունավետությունը:

Կրտսեր դպրոցի ուսուցիչները գիտակցելով, որ տարրական դասարաններում կազմակերպված ճիշտ և խելամիտ ուսուցումը սովորողի ապագա հաջողությունների բանալին է, խնդրի իրականացմանը պետք է վերաբերվեն պատասխանատվության մեծ զգացումով: Ընտրելով լեզվական տարրական գիտելիքների ուսուցման այնպիսի ձևեր ու եղանակներ, որոնք բնութագրվում են մատուցման թեթևությամբ ու գրավչությամբ՝ նպաստում են մտածողության զարգացման բարենպաստ միջավայր ստեղծելուն՝ հայրենիքին տալու ժամանակակից, կրթված և դաստիարակված սերունդ: Վերը նշված ընդհանուր և միասնական նպատակի իրականացմանը նպաստում է ուսուցման գործընթացում զննականության կիրառումը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի մեթոդաբանությունը հիմնված է մանկավարժական և հոգեբանական գրականության վերլուծության վրա՝ մասնավորապես կենտրոնանալով զննականության սկզբունքի վրա: Ուսումնասիրվել են դասական

և ժամանակակից մանկավարժների ու հոգեբանների աշխատությունները, որոնք անդրադարձել են մանկական ճանաչողության զարգացմանը և ուսուցման գործընթացում զգայական ընկալման դերին: Հատուկ ուշադրություն է դարձվել Ժան Պիաժեի **ճանաչողական զարգացման տեսությանը**՝ որպես տարրական դպրոցական տարիքի երեխաների մտածողության առանձնահատկությունները հասկանալու հիմք, ինչպես նաև Լև Վիգոտսկու **սոցիալ-մշակութային տեսությանը**, որը շեշտում է **սոցիալական փոխազդեցության** և **մշակութային գործիքների** դերը ճանաչողական զարգացման գործում:

Կիրառվել է վերլուծական մոտեցում՝ զննականության տարբեր տեսակները և դրանց արդյունավետ կիրառման մեթոդական սկզբունքները համակարգելու և դասակարգելու համար: Աշխատանքում ինտեգրվել են նաև հայ մանկավարժ-գիտնական Ջուլիետա Գյուլամիրյանի աշխատություններում արծարծված մտքերը՝ կապված ուսուցման գործընթացում ճանաչողական ակտիվության և գործնական մոտեցումների կարևորության հետ: Մեր հետազոտությունն ու առաջարկվող մեթոդները ուղղված են ՀՊՉ-ի պահանջներին համահունչ **կարողունակությունների** զարգացմանը: ՀՊՉ-ն պարտադիր է ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող բոլոր ուսումնական նյութերի համար, իսկ **կարողունակությունները** սահմանվում են որպես «գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևեր» (**ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136 որոշում, հոդված 4, 6,** https://www.arlis.am/hy/acts/149788):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Զննականությունը մանկավարժական այն սկզբունքն է, որի համաձայն ուսումնական նյութը պետք է ներկայացվի այնպես, որ աշակերտները կարողանան այն ընկալել իրենց զգայարանների միջոցով (**Ուշինսկի Կ., 1981**): Որքան շատ զգայարաններ են մասնակցում ինֆորմացիայի ստացմանը, այնքան ավելի արագ, խորը և կայուն է լինում յուրացումը: Լև Վիգոտսկու **սոցիալ-մշակութային տեսության** համաձայն՝ զննականությունը հսկայական դեր ունի երեխաների ճանաչողական զարգացման գործում՝ հատկապես **զարգացման մերձավոր գոտու**

(ԶՄԳ) շրջանակներում: Զննական նյութերը, մոդելները և դիդակտիկ խաղերը հանդես են գալիս որպես **միջնորդող գործիքներ**, որոնք օգնում են ուսուցչին ուղղորդել աշակերտին այն խնդիրների լուծման մեջ, որոնք առանց այդ աջակցության նա չէր կարողանա կատարել: Այսինքն, զննականությունը ծառայում է որպես **«կառուցվածքային օգնություն» (scaffolding)**, որը ժամանակավորապես աջակցում է սովորողին՝ օգնելով յուրացնել նյութը և առաջ մղելով նրա զարգացումը:

Զննական մեթոդները հնարավորություն են ընձեռում օբյեկտներին, առարկաներին ծանոթանալ բնական վիճակում կամ սիմվոլների միջոցով: Ուսուցիչը պետք է ճիշտ ընտրի զննական միջոցները՝ ապահովելով գիտելիքների, հմտությունների ու կարողությունների խոր յուրացումը: Արդի փուլում օգտագործվում են ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից **ուսումնական տեխնիկական միջոցներ**: **Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ)** կիրառումը տարրական դասարաններում ակտիվացնում է սովորողների ճանաչողական գործունեությունը, ապահովում դիտողականություն և տարբերակված ուսուցում: Որպես զննականության մի տարր և ակտիվ ուսուցման ձև, կարևորվում է նաև **խաղը**: Խաղը նպաստում է երեխաների բանավոր ու գրավոր խոսքի, բառապաշարի հարստացման, ստեղծագործական մտածողության և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Դիդակտիկ խաղը գիտելիքների և կարողությունների ձեռքբերման արդյունավետ միջոց է, որն ակտիվացնում է աշակերտի կամային հիշողությունը, հետաքրքրություններն ու ճանաչողական գործունեությունը (**Գյուլամիրյան Ջ., 2009**):

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման գործում մեծ է նաև **էքսկուրսիաների և բնության դիտումների** դերը: Ինչպես նշում է Ա. Բահաթրյանը, զննական ուսուցումն ընդգրկում է բոլոր զգայարանները (**Բահաթրյան Է., 1980**): Բնության գրկում կամ թանգարաններում անցկացվող դասերն ավելի տպավորիչ են, մնայուն և նպաստում են կապակցված խոսքի զարգացմանը:

Հետազոտության իրականացում և արդյունքներ

Թեմայի շուրջ հետազոտական աշխատանքը անցկացնելու համար մեր կողմից ընտրվել է Արմավիրի մարզի Մեծամորի խոշորացված համայնքի Գետաշեն գյուղի միջնակարգ դպրոցի 2-րդ և 3-րդ դասարանները: Քանի որ նշված դպրոցում դասվարներից մեկը ես եմ, մեր կողմից համակարգված աշխատանքներն իրականացվել են 2023-24 ուստարվանից՝ ընտրված 2-րդ դասարանում և շարունակվել մինչև 2024-25 ուստարվա՝ 3-րդ դասարանի ավարտը:

Հետազոտություններն իրականացնելու համար առաջին հերթին պետք էր հասկանալ, թե դասարանում աշակերտների քանի տոկոսն է ընկալել մինչ այդ՝2-րդ և 3-րդ դասարանում իրենց մատուցված լեզվական տարրական գիտելիքները, քանիսի հետ պետք է ավելի շատ աշխատել և ում հետ պետք է կրկնել, վերհիշել, ամրապնդել անցածը և նոր միայն անցնել առաջ:

1. Սկզբնական գիտելիքների գնահատում: Հետազոտությունն սկսվել է հայտորոշիչ թեստային գրավոր աշխատանքի միջոցով՝ գնահատելու աշակերտների (ընդհանուր 19 սովորող) լեզվական տարրական գիտելիքների մակարդակը: Թեստը բաղկացած էր տասը առաջադրանքից՝ համապատասխան հանրակրթական չափորոշչին:

Արդյունքներ



- **Բարձր մակարդակ:** 81% (կատարել են առաջադրանքը հիմնովին)

- **Միջին մակարդակ:** 11% (ունեցել են որոշ բացթողումներ)
- **Ցածր մակարդակ:** 8% (դժվարացել են կատարել առաջադրանքը)

Հիմնական բացթողումներ: Բառի կազմություն,կետադրություն և թվականների ճիշտ գրություն:

Այնուհետև, 2-րդ և 3-րդ դասարանում բանավոր հարցումների և սովորողների բանավոր ու գրավոր խոսքի դիտարկման վերլուծությունից պարզ դարձավ, որ ձևաբանական գիտելիքները կրտսեր դպրոցականների մոտ բավական ցածր է, իսկ ցուցաբերած գիտելիքներն ավելի շատ վերարտադրողական բնույթի են և չիմաստավորված: Պետք է նշել, որ հարցման ենթարկված սովորողների մեծ մասի ակտիվ բառապաշարն աղքատիկ էր, մասնավորապես նրանց խոսքում մեծ թիվ էին կազմում ձևաբանական սխալները (գոյականի հոգնակի թվի սխալ կազմություն, հոլովական վերջավորությունների ոչ ճիշտ կիրառում, բայերի ժամանակաձևերի շփոթում և այլն): Համոզված լինելով, որ «երեխաների սովորելու դժվարությունների պատճառներից մեկն այն է, որ գիտելիքները նրանց համար հաճախ մնում են որպես անշարժ բեռ, կուտակվում են իբրև «պաշար» «շրջանառության մեջ չեն մտնում», «չեն կիրառվում» (**Գյուլամիրյան Ջ., 2018**)՝ մեր առջև խնդիր դրեցինք ուսումնասիրած յուրաքանչյուր լեզվական, մասնավորապես ձևաբանական իրողություն կիրառել տալ խոսքում:

Հետազոտական աշխատանքներին մասնակից ուսուցիչներս առաջնահերթ ձեռնամուխ եղանք սովորողների բառապաշարի հարստացման, նրանց՝ խոսքային գործունեություն իրականացնելու կարողությունների զարգացման աշխատանքներին՝ աշակետներին նախապատրաստելով մտահաղորդակցական գործունեությանը:

Ինչ վերաբերում է սովորողների կողմից նախադասության տեսակներն ըստ հնչերանգի՝պատմողական,հարցական,բացականչական և հրամայական, մեկը մյուսից տարբերելու գիտելիքներին ու կարողություններին, ապա այս հարցում ևս մեր ուսումնասիրման շրջանակներում ստացված արդյունքերն ավելի քան ցանկալի դրական ցուցանիշներ տվեցին:

Օրինակ՝ հիմք ընդունելով «Ընդարձակեք նախադասությունները» խաղը՝ (**Գյուլամիրյան Ջ.,2009**) դասարանը բաժանվեց երեք խմբի: Յուրաքանչյուր խումբ ընտրեց մեկ ծրար (կարմիր, կապույտ և կանաչ գույնի ծրարներ էին, որոնց մեջ լցված էին երեք պատմողական նախադասություններ կազմող առարկա, առարկայի հատկանիշ, քանակ և գործողություն արտահայտող բառեր): Հանեցին ծրարների պարունակությունը, ամբողջացրեցին նախադասությունները, այնուհետև վերածեցին հրամայական,հարցական և բացականչական նախադասությունների և գրեցին տետրերում:

Այսպես. ինչպես առավել պատկերավոր երևում է ներքոնշյալ գծապատկերում՝ կապույտ գույնով նշված են հետազոտության բարձր արդյունքները, կարմիրով՝ միջինը, իսկ կանաչով՝ ցածրը:



Ուշադրություն դարձրինք նաև կարդացած ստեղծագործության շուրջ իրականացվող լեզվական տարրական բնույթի վերլուծությունների ժամանակ աշակերտների մասնակցության ակտիվությանը՝ պատմելու տարբեր տեսակների կիրառումից հետո: «Ինչպես ենք մենք միասին ապրում մոլորակում»թեմայի ամփոփումից հետո երեխաներին տրվեց հետևյալ առաջադրանքը՝մենք սկսեցինք պատմել մի պատմություն, որը հերթով պետք է շարունակեին երեխաները: Պետք է ասել, որ անթերի կերպով առաջադրանքը կատարվեց, երեխաների մեծ մասը պարզապես շարունակելու միջոցով առաջ էին տանում պատմվածքը, մի մասը ստեղծագործաբար էր մոտենում պատմվածքին, մի մասը պատմում էր դերերով, մյուս մասը՝ որպես ականատես, որոշները մեկնաբանելով, անգամ ոմանք՝ որպես մասնակից: Նշենք նաև,որ դասերը հիմնականում անցկացրել ենք մեր դպրոցի

բացօթյա դասարանում: Այժմ տեսնենք համապատասխան տվյալները գծապատկերով.



Այնուհետև տնային աշխատանք հանձնարարվեց արձակ շարադրել «Թռչունի մտածմունքը» բանաստեղծության բովանդակությունը՝ փոխելով ավարտը: Աշխատանքը ներկայացվեց ինքնաշեն նկարազարդված գրքերով, որոնք մեկը մյուսից տարբերվում էին ինքնատիպ մտածողությամբ,ստեղծագործական թռիչքով և երևակայությամբ, որն էլ մեր առջև դրված խնդրի դրական արդյունքն էր:

2. Մեթոդական մոտեցումների կիրառում: Թեստի արդյունքներից հետո սկսվել են համակարգված աշխատանքներ՝ կիրառելով ուսուցման ակտիվ մեթոդներ և զննականություն:

Բանավոր խոսքի զարգացում: Զարգացվել է սովորողների լսելու կարողությունը՝ կիրառելով համեմատության և հակադրության վարժություններ:

Խաղերի կիրառում: Հետազոտությունների ընթացքում հաշվի առնելով խաղի դերն ու նշանակությունը սովորողների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ընդհանրապես և **դիդակտիկ խաղերի** դերը նրանց ճանաչողական կարողությունների զարգացման, դաստիարակության գործում մասնավորապես՝ ուսումնական գործունեության պլանավորման և կազմակերպման ժամանակ մեծ տեղ տվեցինք բազմապիսի խաղերին: Հանգամանորեն ընտրեցինք և արդյունավետորեն կիրառեցինք դրանք և՛ նոր նյութի հաղորդման, և՛ ձեռք բերած գիտելիքների ամրակայման, և՛ դրանց յուրացման մակարդակը ստուգելու նպատակով: Նկատեցինք, որ դիդակտիկ

խաղերը մեր ուսումնական գործընթացի անքակտելի մասն են կազմում, որոնց միջոցով երեխաների մեջ ձևավորվում են սեփական գործողությունները կազմակերպելու, համագործակցելու ունակությունները, ակտիվանում է երեխաների մտածողությունը, ուշադրությունը, խոսքը և երևակայությունը, իսկ դասարանում ստեղծվում է ուրախ և անկաշկանդ մթնոլորտ: Ներկայացնենք դիդակտիկ խաղերից մի քանիսը, որոնք իրականացրել ենք օգտվելով Ջ.Գյուլամիրյանի «Խաղալով սովորենք» ուսումնաօժանդակ գրքից:

«Ինչպիսի՞ն է առարկան»

Խաղի նպատակները- Շոշափելիքի զգայարանի զուգորդմամբ զարգացնել երեխաների ուշադրությունը, ուշիմությունը, ամրակայել առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի մասին երեխաների գիտելիքները և բառակապակցություն կազմելու կարողությունը:

Անհրաժեշտ պարագաներ - Ինքնաշեն արկղ-փղիկ, տարբեր չափի , ձևի և նյութի առարկաներ:

Խաղի ընթացքը- Սեղանին դրված է արկղ-փղիկը, որի մեջ լցված են զանազան առարկաներ: Աշակերտներից յուրաքանչյուրը մոտենում է արկղին,փղի կնճիթի միջով ձեռքը մտցնում է «մարմնի» մեջ, շոշափում այնտեղ գտնվող առարկաներից մեկը, թվարկում հատկանիշները և գուշակում առարկան: Այնուհետև, դուրս բերելով առարկան՝կազմում են բառակապակցություններ,կազմում նախադասություններ և գրում տետրում:

«Գտիր հոմանիշը»

Խաղի նպատակները- Ամրակայել հոմանիշների մասին երեխաների ունեցած գիտելիքներն ու կարողությունները, ձևավորել համագործակցային ունակություններ:

Անհրաժեշտ պարագաներ- Ինքնաշեն բազմաֆունկցիոնալ ծաղկի մակետ՝ կենտրոնում դրված է հոմանիշային բառերից վեց բառ, վեց թերթիկներին նույնպես մեկական հոմանիշ բառ, մի խումբ հոմանիշներ էլ դրված են սեղանին:

Խաղի ընթացքը-Աշխատանքը կատարվում է վեց հոգուց բաղկացած խմբերով: Խմբի յուրաքանչյուր անդամ ծաղկի կենտրոնից վերցնում է մեկ բառ և դնում է

համապատասխան ծաղկաթերթին: Այնուհետև պետք է որոշակի ժամանակահատվածում սեղանի վրայից վերցնել մյուս հոմանիշները և դնել համապատասխան ծաղկաթերթերին:

Վերջում բարձրաձայն քննարկել յուրաքանչյուր խմբի աշխատանքը և գնահատել:

Այս ծաղիկ-մակետով կարելի է կազմակերպել լեզվական տարրական գիտելիքների վերաբերյալ տարբեր խաղեր:

«Խմբավորել բառերը»

Խաղի նպատակները- Ամրակայել արմատի և ածանցի մասին երեխաների գիտելիքները, հարստացնել բառապաշարը:

Անհրաժեշտ պարագաներ- Ինքնաշեն արկղ՝լցված թղթերով, որոնց վրա գրված են պարզ, բարդ և ածանցավոր բառեր:

Խաղի ընթացքը- Յուրաքանչյուր երեխա մոտենում է արկղին, միջից հանում մեկ թերթիկ, կարդում բառը, վերլուծում և դնում համապատասխան բառերի շարքում՝պարզ, բարդ, ածանցավոր: Կարելի է նաև արմատներով կազմել նոր բառեր և գրել տետրերուն:

Արդյունքներ (դիդակտիկ խաղերի կիրառման դրական դինամիկան ներկայացված է գծապատկերներով): Նկատվել է սովորողների ուշադրության, մտածողության, խոսքի և երևակայության ակտիվացում, ինչպես նաև համագործակցային ունակությունների ձևավորում:

Էքսկուրսիաներ և բնության դիտումներ: Կազմակերպվել են ուսումնաճանաչողական էքսկուրսիաներ (Գետաշենից՝ Հանրապետության հրապարակ, Երևանյան շրջայց, Բուսաբանական այգի, Էջմիածին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հռիփսիմե, Գայանե եկեղեցիներ), Գառնու հեթանոսական տաճար և Գեղարդի վանք, թատրոն և կինո, հայ գրողների և նկարիչների տուն-թանգարաններ, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան, Հայաստանի ազգային պատկերասրահ)՝ հիմնված «Մայրենի 2» և «Մայրենի 3» դասագրքերի թեմատիկ նյութերի վրա: Սա թույլ է տվել գիտելիքները կիրառել իրական միջավայրում և նպաստել կապակցված խոսքի զարգացմանը: Տեսանելի

դարձավ,որ էքսկուրսիան, որպես զննականության մի տարր և գործնական աշխատանքի տեսակ,հիմնված է ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող չափորոշչահեն գիտելիքների կայուն իմացության վրա և ենթադրում է պարզ և ծանոթ իրադրություններում դրանք կիրառելու կարողություն:

Կերպարների վերլուծություն: Մեր կատարած հետազոտական աշխատանքի ժամանակ պարզ դարձավ, որ աշակերտների մեծամասնությանը հետաքրքրում է ստեղծագործությունների կերպարների շուրջ իրականացվող վերլուծական աշխատանքը. նրանք ակտիվորեն էին մասնակցում քննարկումներին, համեմատում էին գործող անձանց և կերպարները, քննադատում էին, ապրումակցում նրանց, արդարացնում կամ մեղադրում, բարի և չար կերպարներին որոշում, փորձում հասկանալ նրանց արարքները և այլն՝օգտագործելով իրենց սովորած լեզվական տարրական գիտելիքները:

3. Զնաբանական գիտելիքների ուսուցում: Առարկա, գործողություն, հատկանիշ, քանակ ցույց տվող բառերի միաժամանակյա ուսուցումը զննականության միջոցով ցույց է տվել իր արդյունավետությունը, քանի որ համադրումը նպաստում է քերականական գիտելիքների խորը ընկալմանը և կապակցված խոսքի ճիշտ կառուցմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարված ուսումնասիրության և հետազոտության արդյունքում արվել են հետևյալ եզրակացությունները.

1. **Զննականությունը** ուսուցչի ձեռքում հզոր գործիք է, որը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն ներգրավվել ուսումնական գործընթացում և ձեռք բերել ամուր գիտելիքներ:

2. **Կարողունակահեն ուսուցման** մեջ զննականության և փոխներգործուն մեթոդների համակարգված կիրառումը լեզվական տարրական գիտելիքների ուսումնասիրման պարտադիր բաղադրիչ է: Սա ուղղակիորեն նպաստում է **ՀՊՉ-ով** սահմանված **կարողունակությունների** ձևավորմանը՝ զարգացնելով սովորողի «գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ

իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերը» (**ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136 որոշում, հոդված 6;** https://www.arlis.am/hy/acts/149788):

3. Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման գերխնդիրը լուծվում է մայրենիի դասի ժամանակ զննականության արդյունավետ կիրառմամբ: Ճիշտ ընտրված և մեթոդապես հիմնավորված զննական պարագաները և ՏՀՏ միջոցները նպաստում են նյութի դյուրամարսելիությանը, իսկ աշակերտների մոտ զարգանում են վերլուծելու, համադրելու, ինքնուրույն կշռադատելու և եզրահանգումներ անելու կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բահաթրյան Է. (1980),** Մեթոդիկա: Դասագիրք բուհերի համար, Երևան, «Լույս» հրատ.:
2. **Գյուլամիրյան Ջ. (2009),** Խաղալով սովորենք, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
3. **Գյուլամիրյան Ջ. (2018**), Մայրենիի ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ.:
4. **Տեր-Գրիգորյան Ա. (1980**), Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը, Երևան, «Լույս» հրատ.:
5. **Ուշինսկի Կ. (1981),** Մանկավարժական ընտիր երկեր, Երևան, «Լույս» հրատ.:
6. **Выготский Л. (1934),** Мышление и речь, Москва-Ленинград, Государственное учебно-педагогическое издательство.
7. ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշում, հոդված 1; 4; 6; https://www.arlis.am/hy/acts/149788

REFERENCES

1. **Bahatryan E. (1980**), Met'odika: Dasagirq bowheri hamar /Methodology: Textbook for Universities/, Yerevan, “Luys”.

2. **Gyulamiryan J. (2009),** Xaghalov sovorenq /Let's Learn by Playing/. Yerevan, “Zangak-97”.
3. **Gyulamiryan J. (2018**), Mayrenii owsowcman met'odika /Methodology of Mother Tongue Teaching/. Yerevan, “Zangak”.
4. **Ter-Grigoryan A. (1980**), Kardalow & grelow skzbnakan karoghowt'yownneri d'&avorowmy' /Formation of Initial Reading and Writing Skills/, Yerevan, “Luys”.
5. **Ushinsky K. (1981),** Mankavarjhakan y'ntir erker /Selected Pedagogical Works/. Yerevan, “Luys”.
6. **Vygotsky L. (1934),** Myshleniye i rech' /Thinking and Speech/, Moscow-Leningrad: State Educational and Pedagogical Publishing House.
7. Resolution of the Government of the Republic of Armenia № 136-Н of February 4, 2021; Articles 1; 4; 6; https://www.arlis.am/hy/acts/149788

Victoria Arshakyan

The Role of Visual Aids in Elementary Grades

Conclusion

Key words and expression: *Visual aids, Elementary grades, Pedagogy, Educational excursions and nature observations, Interactive and practical components, Competency, Sociocultural theory, Information and Communication Technologies (ICT), Didactic games.*

This article discusses the importance of the principle of visual aids, in enhancing the effectiveness of the educational process in elementary school. The principle of visual aids is one of the oldest, arising from the recognition of patterns discovered through everyday knowledge. A detailed explanation of the principle of visual aids was given by John Amos Comenius, who wrote: "Let it be a golden rule for the teacher that everything which can be perceived by the senses should be presented accordingly: what is visible — through sight, what is audible — through hearing, smells — through the sense of smell, tastes — through taste, and what is tangible — through touch. If an object can be perceived by multiple senses at once, let it be perceived simultaneously by all of them." (**Ter-Grigoryan A., 1980)**

It emphasizes the role of interactive and practical methods that develop students' cognitive activity. Visual aids contribute to the formation of competencies required by modern educational standards. A. Bakhtryan broadens the concept of visual learning by including all the senses and direct interaction with nature.

The conclusion is that excursions and observations of the surrounding world serve as the best first lessons in thinking: they ensure deeper learning, develop speech, and shape aesthetic perception while strengthening the child's connection with nature.

Виктория Аршакян

Роль наглядности в начальных классах

Заключение

Ключевые слова и выражения: *наглядность, начальные классы, педагогика, учебно-познавательные экскурсии и наблюдения за природой, интерактивные и практические компоненты, компетентность, социокультурная теория, информационно-коммуникационные технологии (икт), дидактические игры.*

Данная статья рассматривает значение принципа наглядности в повышении эффективности учебного процесса в начальных классах. Принцип наглядности является одним из древнейших, и он возник как результат осознания закономерностей, выявленных в повседневной жизни. Подробное объяснение принципа наблюдательности принадлежит Яну Амосу Коменскому: «Для учителя пусть золотым правилом будет то, — пишет он, — что всё, что можно представить для восприятия органами чувств, должно быть представлено именно так: видимое — зрением, слышимое — слухом, запах — обонянием, вкус — вкусом, осязаемое — осязанием. Если объект можно воспринять сразу несколькими органами чувств, пусть он и будет воспринят всеми одновременно» **(Тер-Григорян А., 1980).**

Подчеркивается роль интерактивных и практических методов, развивающих познавательную активность учащихся. Наглядность способствует формированию компетенций, предусмотренных современными образовательными стандартами. А. Бахатрян расширяет понимание наглядности, включив в неё все органы чувств и непосредственное взаимодействие с природой.

Делается вывод, что экскурсии и наблюдения за окружающим миром являются оптимальными первыми уроками мышления: они обеспечивают более глубокое усвоение, развивают речь и формируют эстетическое восприятие, укрепляя связь ребёнка с природой.

Վիկտորյա Արշակյան - Արմավիրի մարզի Մեծամորի խոշորացված համայնք «Գետաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ, դասվար: viktoria-arshakyan@yandex.com

Виктория Аршакян - Укрупнённая община Мецамор Армавирской области, ГНКО «Средняя школа с. Геташен», учитель начальных классов: viktoria-arshakyan@yandex.com

Victoria Arshakyan - The enlarged Metsamor community of the Armavir region, "Secondary School of v. Getashen" SNCO, elementary school teacher: viktoria-arshakyan@yandex.com

Խմբագրություն է ուղարկվել 2.07.2025թ.
Հանձնարարվել է գրախոսության 15.07.2025թ.
Հրապարակման է ներկայացվել 30.0.2025թ.

«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրությունը չեզոքություն է դրսևորում հոդվածներում արտահայտած կարծիքների ու տեսակետների նկատմամբ։